



**ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԵՎ
ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՏՈՒԼՁԱ ՆԱՀԱՆԳԻ
ՄԻՋԵՎ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզը և Ռումինիայի Տուլչա նահանգը,
այսուհետ՝ Կողմեր,

Հաշվի առնելով երկու վարչատարածքային միավորների տարածքային կառավարման
մարմինների և նրանց ներկայացրած համայնքների բարեկամանալու
մտադրությունները, հիմնված փոխադարձ հարգանքի և հանրային հետաքրքրություն
ներկայացնող տարբեր ոլորտներում համագործակցության վրա,

Համոզված լինելով համագործակցության նոր հնարավորություններ ստեղծելու
անհրաժեշտության մեջ, համաձայնեցին հետևյալի մասին.

**Հոդված 1
Նպատակները**

Կողմերը կհամագործակցեն գործակցության փոխշահավետ ուղիների
հաստատման ուղղությամբ՝ համատեղ ծրագրերի մշակման և իրականացման
նպատակով:

**Հոդված 2
Համագործակցության ոլորտները**

Կողմերը, իրենց իրավասություններին համապատասխան, կհամագործակցեն
մշակույթի, կրթության և գիտության, առողջապահության, տեղական
ինքնակառավարման, բնապահպանության, տնտեսության և ներդրումների, երկու
կողմերի կազմակերպական և գործունեության մեխանիզմների շուրջ փորձի
փոխանակման, սպորտի, զբոսաշրջության ոլորտներում:

**Հոդված 3
Համագործակցության միջոցները**

1. Երկկողմ համագործակցության, վստահության, հավասարության և
փոխշահավետության սկզբունքների հիման վրա, Կողմերը կզարգացնեն
համագործակցությունը Հոդված 2-ում նշված ոլորտներում:
2. Իրենց իրավասություններին համապատասխան, Կողմերը.

- I. Կաջակցեն եւ կնպաստեն տարբեր ոլորտների հաստատությունների, կազմակերպությունների, ոչ կառավարական կազմակերպությունների, ընկերությունների եւ մասնագետների միջեւ անմիջական շփումների հաստատմանը:
- II. Հանձն կառնեն բանակցելու և համագործակցության կոնկրետ ծրագրեր հաստատելու կանոնավոր նամակագրության փոխանակման միջոցով:
- III. Կխրախուսեն կազմակերպություններին եւ տնտեսական գործակալություններին մասնակցելու Հայաստանում և Ռումինիայում կազմակերպվող տոնավաճառներին եւ ցուցահանդեսներին: Երկու մարզերի տեղական կառավարման մարմինները միմյանց կտեղեկացվեն ցուցադրության հնարավորությունների վերաբերյալ (փառատոներ, ցուցահանդեսներ, տոնավաճառներ, սալոններ):
- IV. Կողմերը կարող են պայմանավորվել օտար գործընկերների հետ համագործակցության շուրջ, իրենց երկրների օրենսդրությամբ սահմանված օրինական շրջանակում, և իրենց տնտեսական հնարավորությունների սահմաններում աջակցել մշակութային եւ մարզական ոլորտներում փոխանակման ծրագրերին, այդ նպատակով դյուրացնելով հանրային հաստատությունների, ինչպես նաև մշակութային եւ մարզական կազմակերպությունների միջև համագործակցությունը:
- V. Կաջակցեն Հոդված 2-ում նշված ոլորտների փորձագետների և մասնագետների պատվիրակությունների փոխայցելություններին, և կապեր կհաստատեն երկու վարչատարածքային միավորների պաշտոնական ներկայացուցիչների միջև:
- VI. Կփոխանակեն երկու վարչատարածքային միավորների տեղական համայնքների, և երկու երկրների տեղական կառավարման մարմինների գործունեությանը վերաբերող տեղեկություններ:
- VII. Կաջակցեն և կզարգացնեն գործնական և փոխշահավետ առեւտրատնտեսական կապեր, երկու վարչատարածքային միավորներից գործարարների փոխայցելությունների կազմակերպման և երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացման միջոցով:

Հոդված 4

Ֆինանսական ասպեկտները

Կողմերը ինքնուրույն կհոգան Համագործակցության այս համաձայնագրից բխող բոլոր ծախսերը, երկու կողմերի երկրների օրենքների սահմաններում:

Հոդված 5

Համագործակցության մոնիթորինգը

Կողմերը պարբերական մոնիթորինգի կենթարկեն Համագործակցության սույն համաձայնագրի դրույթների կատարման ընթացքը՝ նամակագրության փոխանակման եւ հանդիպումների միջոցով և կնշանակեն համակարգողներ, ովքեր Կողմերի ներկայացուցիչներին պարբերաբար կտեղեկացնեն համագործակցության ծրագրերի փուլերի վերաբերյալ:

Հոդված 6
Վեճերի կարգավորումը

Սույն Համագործակցության համաձայնագրի մեկնաբանման կամ իրականացման հետ կապված վիճահարույց հարցերը կլուծվեն Կողմերի միջև բարեկամաբար, բանակցությունների միջոցով:

Հոդված 7
Համագործակցության համաձայնագրի
դրույթների փոփոխությունը

Սույն Համագործակցության համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի գրավոր համաձայնությամբ: Փոփոխություններն ու լրացումները ուժի մեջ են մտնում ստորագրման օրվանից:

Հոդված 8
Կիրառումը, տևողությունը և դադարեցումը

Սույն Համագործակցության համաձայնագիրը կնքվում է անժամկետ եւ ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել Համագործակցության համաձայնագիրը՝ գրավոր ծանուցելով մյուս կողմին: Այդ դեպքում, սույն Համագործակցության համաձայնագիրը ուժը կորցրած կճանաչվի ծանուցման 30-րդ օրվանից սկսած:

Սույն Համագործակցության համաձայնագիրը դադարեցումը չի ազդի նրա կիրառման ընթացքում նախաձեռնված ծրագրերի և նախագծերի իրականացման ընթացքի վրա, եթե Կողմերը չեն համաձայնվում հակառակի մասին:

Ստորագրված է _____, _____ թվականին երկու հավասարազոր բնօրինակով, հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, բոլոր տեքստերն էլ հավասարազոր: Մեկնաբանման տարբերությունների դեպքում գերակա է անգլերեն տեքստը:

Հայաստանի
Տավուշի մարզի
ՀԱՄԱՐ

Ռումինիայի
Տուլչա նահանգի
ՀԱՄԱՐ

ՀՈՎԻԿ ԱՐՈՎՅԱՆ
Մարզպետ



ՀՈՐԻԱ ԹԵՌԴՈՐԵՍՎՈՒ
Նախագահ

